https://doi.org/ 10.56246/9789939117652-260

ԽՈՍՔԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԵՎ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ՝ ՈՐՊԵՍ ՔՈՒՐՄ-ԾԻՍԱՐԱՐԻ ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ամփոփում: *Հնուց ի վեր մարդը խոսքին հզոր զորություն է վերագրել և հավատացել նրա ուժին և իրագործելիությանը: Ըստ այս պատկերացումների, ասված որևէ խոսք չի կորչում տիեզերական տարածության մեջ, այլ լսելի է դառնում գերբնական էակներին, հետևապես և՝ ունենում է իր դրական և բացասական հետևանքները: Այս հավատալիքից էլ ծագել են խոսքային զանազան մոգարգելքները և այս հավատալիքը մեր օրերում էլ դեռ կենդանի է համայական բնույթի բանահյուսական ժանրերում (ժողովրդական բուժադրթքներ, երդումներ, անեծք-օրհնանքներ):*

Խոսքը տարբեր մշակույթներում եղել է պաշտամունքի առարկա, առասպելական պատկերացումներում ընկալվել որպես նախաէություն, որպես անձնավորված աստված, որպես զոհ:

Հոդվածում քննվում են խոսքի պաշտամունքի զանազան դրսևորումները հնագույն մշակույթներում, բանաստեղծի՝ որպես քուրմ-ծիսարարի և բանաստեղծության ծագման ու նախնական ընկալման մասին առասպելական որոշ պատկերացումներ:

Հիմնաբառեր՝ *խոսքի պաշտամունք, անձնավորում, աշխարհաստեղծում, խոսքային զոհաբերություն, քուրմ-ծիսարար, հիմն, աղոթք, բանաստեղծություն*

Խոսքը՝ որպես նախաէություն և աստված

Հնագույն մշակույթներից սկսած մինչև մերօրյա հավատալիքները կենդանի են խոսքի պաշտամունքի զանազան դրսևորումներ, ըստ որոնց՝ խոսքն ընկալվել է որպես նախաէություն և որպես աստված: Խոսքի պաշտամունքը հատկապես հարուստ դրսևորումներով է պահպանվել հին հնդկական դիցաբանական տեքստերում: Վեդայական գրականության մեջ, օրինակ, հոգևոր իմացության առաջին նշանը խոսքն է, քանի որ անուն տալ, նշանակում է առնչվել «իրերի հոգուն»[1]: Ըստ քրիստոնեական պատկերացումների, խոսքը նախորդել է աշխարհաստեղծմանը և դարձել աշխարհաստեղծման միջոց. Աստված խոսքով է արարում աշխարհը. «*Եւ ասաց Աստուած. Եղիցի լոյս: Եւ եղաւ լոյս*»[2]: Աստվածային խոսքը, փաստորեն, դառնում է հիմքը և էությունը ամբողջ աշխարհի:

Աստծու ձայնային արտաբերմամբ է աշխարհն արարվում նաև եզդիների ս.գրքում: Աշխարհն այստեղ ստեղծվում է աստծո ճիչից ու աղմուկից[3]. Աստված ճչում է, և ստեղծվում են աշխարհի չորս ծագերը, աստված բղավում է, քարերն են առաջանում[4]:

Մեռյալ լռության մեջ լսվող ձայնը կենդանություն և շունչ է հաղորդում, իսկ խոսքը՝ իմաստավորում է իրերի աշխարհը, հոգի տալիս դրանց:

---

[1] Հին արևելքի պոեզիա, Եր., ԵՊՀ հրատ., 1982, էջ 565:

[2] Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, Ծնունդք, 1:4:

[3] **Ասատրյան Գ., Փոլադյան Ա.,** Եզդիների դավանանքը // Պատմաբանասիրական հանդես, 1989, № 4, էջ 148:

[4] Նույն տեղում, էջ 144-145: Ուշագրավ է, որ եզդիական կրոնում աստված երեք կերպավորվում ունի, որոնցից մեկը Մալաք-Թավուս սիրամարգ թռչունն է: Վերջինս եզդիների ծիսական առարկաների շարքում պատկերվում է աքաղաղի կերպարով: Աքաղաղը քրիստոնեական հավատալիքներում էլ նոր կյանքի խորհրդանիշն է. նա իր կանչով պետք է հարություն տա մեռյալներին, ինչպես ամեն լուսաբացի արթնացնում է քնած մարդկանց՝ իր ձայնով և ճիչով սկիզբ դնելով նոր օրվան:

Բերված առասպելական պատկերացումներին համահունչ է նաև աշխարհաստեղծման կարելաֆիննական տարբերակը, որ պահպանվել է «Կալեվալա» էպոսում: Այստեղ միակ աստվածուհուց՝ Իլմարաթից ծնվող առաջին մարդը «հզոր երգասաց» Վայնեմայնենն է, որը իր երգի ուժով և հմայական խոսքերով ներազդում է բնության և շրջապատի վրա, նպաստում է բնության և բուսականության աճին[1]: Խոսքի և երգի միջոցով բնությանն ու աշխարհին նոր կյանք հաղորդելու՝ վաղեմի այս առասպելական պատկերացումները լավագույնս պահպանվել են «Հազարան բլբուլի»՝ խոսող թռչնի հեքիաթաշարում:

Լինելով պաշտամունքի առարկա՝ խոսքը նաև մարմին է առնում որպես աստված, որպես կենդանի էակ: Այս առումով ամենից հարուստ առասպելական պատկերացումները փոխանցում է հին հնդկական ավանդույթը: «Ռիգվեդան» ունի խոսքի աստվածություն՝ Վաչը, որի կերպարում երևում է խոսք-միտք-գործ եռամիասնությունը[2]: Հին հնդկական ավանդույթում ուշագրավ հիմներ են պահպանվել՝ նվիրված Խոսքին և Իմացությանը:

Խոսքի անձնավորման ուշագրավ դրսևորումներ են պահպանվել քաղաքակրթության նախնական աստիճանի վրա գտնվող ցեղերի մշակույթներում: «Հյուսիսամերիկյան հնդկացիների Նավախո ցեղը անձնավորում է աղոթքը, այն համարում մի էակ, որի հետ կարելի է հաղորդակցվել»[3]:

Խոսքի մասին քրիստոնեական ընկալումը շատ չի տարբերվում վերոհիշյալ նախնական ընկալումներից: Խոսքն այստեղ ոչ միայն նախաէություն է, որ կար ամեն բանից առաջ, ինչպես տեսանք վերը, այլև ինքը՝ կենդանի աստված:

---

[1] Տե՛ս Կալեվալա, Կարելա-ֆիննական էպոս, արձակ պատմեց՝ Հմայակ Սիրաս, Եր., Հայաստան» հրատ., 1972:

[2] Տե՛ս **Топоров В.Н.,** Вач // Мифы народов мира, М., 1991, էջ 219-220:

[3] **Gill S.D.** Prayer as Person: The Performative Force in Navajo Prayer Acts // History of Religions, 1977, Vol. 17, № 2, p. 144.

Հովհանի ավետարանից հայտնի «Ի սկզբանէ էր բանն…» արտահայտությունը, որը լայն ճանաչում ունի ժողովրդի մեջ, շարունակության մեջ հաստատվում է Բանի մարմնավորմամբ. «*Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն: Նա էր ի սկզբանէ առ Աստուած: Ամենայն ինչ նովաւ եղաւ, եւ առանց նորա եղեւ եւ ոչ ինչ որ ինչ եղեւն: Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան. եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ, եւ խաւար նմա ոչ եղեւ հասու: …Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ, եւ տեսաք զփառս նորա, զփառս իբրեւ զմիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք եւ ճշմարտութեամբ»*[1]:

Ահա այստեղից պարզ է դառնում, որ Խոսքը՝ նախաստեղծ Բանը, ինքը՝ Քրիստոսն է, որ մարմին է առնում և իջնում երկիր, տրվում մարդկանց՝ որպես զոհ՝ ճշմարտության լույսը տարածելու:

Խոսքի աստվածային ծագումը. խոսքը՝ որպես աստվածային շնորհ

Խոսքը, այսպիսով, աստվածային էություն ունի, աստվածային ծնունդ: Այն աստվածների մենաշնորհն է, որը շնորհվում է մահկանացուներին: Հին արևելքի պոեզիայում բազմաթիվ տողեր են պահպանվել այս մասին: Ըստ հին իրանական «Ավեստայի», մարդկային խոսքը փոշի է, միայն աստվածային խոսքն է հզոր («*Մի՞թե ինձ թույլն է պետք, / Մարդը, որի խոսքը փոշի է միայն*»[2]): Զրադաշտի Գաթհաներից մեկը՝ «Յասնա» 28-ը, աղոթք է խոսքի մասին, որտեղ Զրադաշտը խնդրում է Մազդային՝ շնորհել Աստվածային Խոսքը, քանի որ միայն աստվածային այս շնորհը կարող է օգնել երգչին՝ մարդկանց խոնարհեցնելու իրեն.

---

[1] Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, Աւետարան ըստ Յովհաննու 1:1-4,14:

[2] Հին արևելքի պոեզիա, էջ 357:

Տուր Զրադաշտին, Մազդա, քո Խոսքը հրաշագործ,

Որ կօգնի վերջապես հաղթահարելու չար ցավերը բոլոր…

…Մազդա, օգնիր երգչին, որ նա բոլորին խոնարհեցնի իրեն[1]:

Ըստ հին իրանական պատկերացումների՝ խոսքն իր մեջ ամփոփում է նաև գործը և «…*տիրանալ Խոսքին՝ նշանակում է տիրանալ Գործին, որը Մտքի հետ կապվում է Խոսքի միջոցով*»[2]:

Բանաստեղծական խոսքի ծագման ուշագրավ տարբերակ է առկա հին հնդկական պաշտամունքային տեքստերում: Այստեղ աշխարհն առաջացած է համարվում առաջնազոհից՝ հազարգլխանի, հազարաչքանի, հազարոտնանի Պուրուշայից: Զոհաբերված Պուրուշայից են ծնվում նաև բանաստեղծական հիմների խոսքերը:

Մինչև վերջ զոհաբերված Պուրուշայից

Ծնվեցին հիմներն ու երգերը,

Բանաստեղծական չափերը նրանից առաջացան,

Առաջացան խոսքերը արարողությունների[3]:

Աստվածային զոհաբերությունից առաջացած խոսքը աստվածների կողմից է տրվում մարդկանց: Նա, ում տրվում է աստվածային խոսքը, ամենազոր է: Խոսքի աստծուն նվիրված հիմնում ինքը՝ աստված է խոսում՝ առաջին դեմքով.

Ում սիրում եմ՝ նրան ուժեղ եմ դարձնում,

Մեկին բրահման, մյուսին՝ ռիշի, մյուսին՝ իմաստուն[4]:

Հայկական դիցաբանական պատկերացումներում ևս միակ ճշմարիտ, անբեկանելի խոսքը գերագույն աստծուն՝ Արամազդին է պատկանում: Խոսքով է Արամազդը կերտում մարդկային ճակատագրերը, նրա արտաբերած խոսքն է, որ

---

[1] Նույն տեղում, էջ 355:

[2] Նույն տեղում, էջ 583:

[3] Նույն տեղում, էջ 270-271:

[4] Նույն տեղում, էջ 282:

Տիր քարտուղարի կողմից վերածվում է գրի՝ դառնալով անբեկանելի ճակատագիր[1]:

Քուրմ-բանաստեղծը. աղոթքը՝ որպես խոսքային զոհաբերություն

Այսպիսով, աստվածային խոսքին տիրողը տարբերվում է սովորական մարդկանցից. նա աստվածների ընտրյալ է, իմաստուն, նա այն մարդն է, որ միջնորդ է աստվածների և մարդկանց միջև: Ինչպես ասվում է հին հնդկական «Իմացություն» հիմնում, խոսքին տիրողը «*հիմներ է ստեղծում, ձուլում է մեղեդի, հայտարարում է իրերի գաղտնիքը*»:

Մեկը նստում է՝ գունազարդելով ծաղիկը հիմնի,
Մեկը ձուլում է մեղեդի՝ շաքվարի տողերին,
Մեկը՝ բրահման, հայտարարում է գաղտնիքն իրերի,
Մեկը զննում է չափը զոհաբերության[2]:

Աստվածներից ընծայված խոսքը նաև աստվածներին տրվող բարձրագույն ընծան է: Հին Միջագետքի «Մեծ երկինքներից՝ մեծ ընդերքներին» հիմնում կարդում ենք հետևյալ տողերը.

Թե աստվածներ եք դուք՝ ձեզ Բառ կընծայեմ,
Թե մարդիկ եք դուք՝ Ճակատագիր կպարգևեմ[3]:

Աստվածներին ընծայվող խոսքը ծիսական համատեքստում զոհաբերման էր նմանվում՝ խոսքային զոհաբերություն, որն առավել է, քան կենդանականը: Խոսքային զոհաբերությունը սրբազան տեքստի հյուսումն է՝ աստվածներին ուղղված, և հիմնի ստեղծողը յուրօրինակ քուրմ-ծիսարար է դառնում: Պատահական չէ, որ մի շարք ավանդույթներում քրմերի շարքում ընդգրկվում էր մեկ քերական, որի գործառույթն էր՝ հետևել ծեսի խոսքային մասի ճշտությանը (տրամաբան-

---

[1] Տե՛ս **Հարությունյան Ս.,** Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 404-405:
[2] Հին արևելքի պոեզիա, էջ 279:
[3] Նույն տեղում, էջ 75

վածությանը)[1]: Այս առումով դիպուկ է Վյաչեսլավ Տոպորովի բնութագրումը, որը նշում է. *«Ըստ էության, քերականը տեքստի հետ անում է նույն գործողությունները, ինչ որ քուրմը՝ զոհի հետ: Նրանք երկուսն էլ մասնատում են, բաժանում նախնական ամբողջականությունը, նույնականացնում են նրա բաժանված մասերը, որոշում են նրանց բնույթը՝ ելնելով նմանությունների համակարգից (մասնավորապես՝ մակրոկոսմի և միկրոկոսմի էլեմենտների), վերստեղծում են նոր միասնություն, ոչ միայն որոշակի և կազմակերպված, այլև գիտակցված խոսքի կրկնությամբ և արտահայտչականությամբ, որը նոր ստեղծված «երկրորդային» ամբողջականությանը (ավելի ամրացված) մի կողմից հաղորդում է հավերժության ուժ…, մյուս կողմից՝ ավելի կառուցիկություն, հասկանալիություն…[2]»*:

Հնդեվրոպական ավանդության տվյալներով բանաստեղծը (քուրմ) փոխակերպվում և նմանվում է Արարչին, որն անդեմ Քաոսի տարրերից կամ տիեզերական զոհի մարմնի երկատմամբ, քառատմամբ, մասերի ցրմամբ և ապա վերահավաքմամբ կերտում է տիեզերքը[3]: Ուշագրավ է, որ բանաստեղծության արարման գործընթացը ինչպես հայ, այնպես էլ առհասարակ հնդեվրոպական ավանդույթում, արհեստագործական բառապաշարով է արտահայտվում[4]: Բանաստեղ-

---

[1] Տե՛ս **Топоров В. Н.,** О ритуале. Введение в проблематику // Архаический ритуал в фольклорных и раннелитературных памятниках, М., изд. “Наука”, 1988, էջ 7-60, էջ 21:

[2] Նույն տեղում:

[3] **Հարությունյան Ս.,** Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Եր., ԵՊՀ հրատ, 2006, էջ 27:

[4] Այս մասին տե՛ս հետևյալ աղբյուրներում. **Հարությունյան Ս.,** Հնդեվրոպական տաղաչափության մի քանի առանձնահատկությունների դրսևորումներր հայ հին բանաստեղծության և բանահյուսության մեջ // Պատմա-բանասիրական հանդես, 1987, № 4, էջ 48-60, էջ 48-49; **Հարությունյան Ս.,** Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Եր., ԵՊՀ հրատ., 2006, էջ 27; **Елизаренкова Т. Я., Топоров В. Н.,** Древнеиндийская поэтика и ее индоевропейские истоки, в сб.: Культура

ծը խոսքը **հյուսում** է, **կերտում** է: Այսպիսի ընկալումը ակնհայտ է հատկապես **քերթող** և **քերթվածք** բառերի ստուգաբանական մակարդակում, ուր բանաստեղծը հանդես է գալիս որպես մի քուրմ-ծիսարար, որը քերթում է խոսքը, ինչպես զոհաբերվող կենդանուն կքերթեր: Նախնական բանաստեղծությունը հիմն է և աղոթք, որը մատուցվում է աստվածներին, ճիշտ ինչպես զոհաբերվող կենդանին: Ավելին, ինչպես վերը նշվեց, խոսքի ընծայաբերումը բարձրագույն պարգև է համարվել:

Խոսքի ընծայումը զոհաբերության է նման: Հին հնդկական «Իմացություն» հիմնում խոսքը ցորենի հետ է համեմատվում, որը իմաստունների կողմից մաղով մաղվում է («*Երբ իմաստունները Խոսքն ստեղծեցին մտքով, / Յանելով այն մաղով, ինչպես հացահատիկ…*»[1]): Զոհի միջոցով ձեռք բերված Խոսքն ինքը զոհ է դառնում՝ մատուցվելով մարդկանց:

Նրանք զոհի օգնությամբ գնացին Խոսքի հետքերով:

Դա գտան՝ թաքնված հիմներ ստեղծողների հոգում:

…….

Ինչ-որ մեկը նայում է, բայց չի տեսնում **Խոսքը:**

Ինչ-որ մեկը լսելով՝ չի լսում նրան:

Բայց նա ինչ-որ մեկին իր մարմինն է տալիս,

Ինչպես կրքոտ կինն է գեղեցիկ զարդերով տրվում ամուսնուն[2]:

Աղոթքի՝ որպես խոսքային զոհաբերության ըմբռնումը, վերապրելով հին հավատալիքներից, ուշագրավ դրսևորում է գտնում Գրիգոր Նարեկացու Մատյանում: Սրտի խորքից Աստծուն ուղղված աղոթքների այս մատյանը Նարեկացին «բանական զոհաբերություն» է անվանում՝ գուցե անգիտակ-

---

и литература древней и средневековой Индии, М., 1979; **Топоров В.Н.,** Поэт, Мифы народов мира, т. 2, М., 1992, էջ 328:

[1] Հին արևելքի պոեզիա, էջ 277:

[2] Նույն տեղում, էջ 278:

ցաբար, սակայն շատ ուղղակիորեն կապվելով պաշտամունքային բանաստեղծական խոսքի նախնական իմաստաբանությանը:

Բանավոր զոհիս նվերն այս սրտանց (ընդգծումը-Ն.Վ.)

Մեղքերիս պարարտ ճարպի զորությամբ ողջակիզվելով՝

Թող որ խոհերի իմ խորհրդակից սենյակի խորքից

Բարձրանա և քեզ հասնի անհապաղ[1]:

Նարեկացու պարագայում ավելի քան ակնհայտ է առասպելաբանաստեղծական այն ընկալումը, ըստ որի՝ բանաստեղծը դառնում է տեքստի և՛ օբյեկտը, և՛ սուբյեկտը, և՛ զոհաբերողը, և՛ զոհը միաժամանակ[2]: Մատյանի՝ որպես աղոթագրքի, կամ, ինչպես Նարեկացին է ասում, «*խոսքային զոհաբերության*» առանցքում բանաստեղծի ինքնազոհաբերվող կերպարն է, որը մարդկության բոլոր մեղքերը վերցնում է իր ուսերին:

Բանաստեղծի կերպարը աստվածացվում է նաև հին եգիպտական հիմներում: «Պոետների փառաբանումը» հիմնը այսպիսի մի օրինակ է, որտեղ բոլոր մեծերն ու փոքրերը համարվում են պոետների երեխաները, քանի որ նա է գլուխը[3]:

Տարբեր ժողովուրդների բանահյուսական ավանդույթներում կան ավանդազրույցներ, որոնցում պատմվում է, թե ինչպես բանաստեղծները երազում աստվածային շնորհ են ստացել՝ ստեղծագործելու: Նախապես չտիրապետելով այդ արվեստին՝ մի օրում սկսել են ստեղծագործել[4]: «Անտիկ շրջանում այսպիսի պատկերացումներ կան Հոմերոսի մոտ, ըստ որի՝ բանաստեղծը «աստվածային երգիչ» է, Հեսիոդոսի «Թեոգոնիայում», ըստ որի պոեզիան Մուսաների «աստվա-

---

[1] Սբ. Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության (Նարեկ), Գրաբարից թարգմանեց Մկրտիչ Խերանյան, Ս. Էջմիածին, 2015, Բան Ա, էջ 15-16:

[2] Տե՛ս **Топоров В.Н.,** Поэт, էջ 327:

[3] Տե՛ս Հին արևելքի պոեզիա, էջ 19:

[4] Տե՛ս **Жирмунский В.М.,** Легенда о призвании певца // Сравнительное литературовединие, Ленинград, 1979, էջ 397-407:

ծային պարգևն» է, և Ապոլոնի նետերի շնորհիվ են ստեղծվում երկրի վրայի բոլոր երգիչները: Այս պատկերացումներից է ավելի ուշ ձևավորվում պոեզիայի աստվածային ծագման մասին տեսությունը Պլատոնի «Ֆեդրայում», այնուհետև «բանաստեղծական խելագարության» հասկացությունը նախ Հորացիոսի մոտ (vesahus poeta), այնուհետև միջնադարյան և Վերածննդի շրջանի եվրոպական պոեզիայում (furor poeticus)»[1]:

Եզրակացություն

Ամփոփելով ասվածը՝ կարող ենք փաստել, որ խոսքը հնագույն դիցաբանական պատկերացումներում պաշտվել է որպես նախաստեղծ էություն, որը, լինելով ամեն ինչից առաջ, արարող և ստեղծող դեր է կատարում: Աստվածային այս խոսքը որոշ ավանդույթներում կերպավորվում է որպես անձնավորված աստվածային էակ, որ տրվում է մարդկանց որպես բարձրագույն պարգև և որպես զոհ:

Նա, ում տրվում է աստվածային խոսքը, դառնում է իմաստուն, ճանաչում է իրերի հոգին, հասու է դառնում գերագույն ճշմարտությանը: Աստվածային խոսքի կրողները դառնում են այդ խոսքի աղբյուր, արարում են ծիսապաշտամունքային հիմներ, որոնք էլ բանաստեղծական խոսքի նախնական դրսևորումներն են, իսկ այդ հիմները ստեղծող քուրմը՝ հնագույն բանաստեղծ-երգիչը, որը խոսքի հետ կատարում է նույն գործողությունները, ինչ որ քուրմը զոհի հետ (մասնատում, քերթում ևլն): Այդպիսով, խոսքային զոհաբերումը նույնանում է կենդանական զոհաբերմանը, իսկ բանաստեղծ-քուրմը միջնորդ է դառնում աստվածների և մարդկանց միջև:

---

[1] **Гринцер Павел,** Поэтика слова // Теория литературы, 1984, №1, с. 130-148, https://voplit.ru/article/poetika-slova/

Գրականություն

1. Աստուածաշունչ: Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, Երևան, Հայաստանի Աստուածաշնչային ընկերություն, 1997
2. Ասատրյան Գ., Փոլադյան Ա., Եզդիների դավանանքը // Պատմա-բանասիրական հանդես, 1989, № 4, էջ 131-150
3. Կալեվալա, Կարելա-ֆիննական էպոս, արձակ պատմեց՝ Հմայակ Սիրաս, Երևան, «Հայաստան» հրատ., 1972
4. Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000
5. Հարությունյան Ս., Հնդեվրոպական տաղաչափության մի քանի առանձնահատկությունների դրսևորումները հայ հին բանաստեղծության և բանահյուսության մեջ // Պատմա-բանասիրական հանդես, 1987, № 4, էջ 48-60
6. Հարությունյան Ս., Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Երևան, ԵՊՀ հրատ, 2006
7. Հին արևելքի պոեզիա, Երևան, ԵՊՀ հրատ., 1982
8. Նարեկացի Գրիգոր, Մատյան ողբերգության (Նարեկ), Գրաբարից թարգմանեց Մկրտիչ Խերանյան, Ս. Էջմիածին, 2015
9. Гринцер Павел, Поэтика слова //Теория литературы, 1984, № 1, с. 130-148, https://voplit.ru/article/poetika-slova/
10. Елизаренкова Т. Я., Топоров В. Н., Древнеиндийская поэтика и ее индоевропейские истоки, в сб.: Культура и литература древней и средневековой Индии, М., 1979
11. Жирмунский В.М., Легенда о призвании певца // Сравнительное литературовединие, Ленинград, 1979, с. 397-407
12. Топоров В.Н., О ритуале. Введение в проблематику // Архаический ритуал в фольклорных и раннелитературных памятниках, Москва, изд. «Наука», 1988, с. 7-60
13. Топоров В.Н., Вач // Мифы народов мира, т. 1, М., 1991, с. 219-220
14. Топоров В.Н., Поэт // Мифы народов мира, т. 2, М., 1992, с. 327-328
15. Gill S.D. Prayer as Person: The Performative Force in Navajo Prayer Acts // History of Religions, 1977, Vol. 17, № 2, p. 143–157

■ НВАРД ВАРДАНЯН

О МИФИЧЕСКОМ ПРЕДСТАВЛЕНИИ КУЛЬТА РЕЧИ И ПОЕЭТА КАК ЖРЕЦА

Резюме

С древних времен люди приписывали речи огромную силу, веря в ее действенность. Согласно этим верованиям, произнесенные слова не растворяются в пустоте; они становятся слышны сверхъестественным существам, что влечет за собой как положительные, так и отрицательные последствия. Это понимание породило различные магические заклинания, которые продолжают находить выражение в таких магических народных жанрах, как молитвы, клятвы, проклятия и благословения.

Речь была предметом поклонения в разных культурах и воспринималась в мифическом контексте как фундаментальная субстанция или даже олицетворялась как божество, представляющее собой форму жертвоприношения. Древневосточная поэзия, а также фольклорные и литературные тексты сохранили богатые представления о почитании устного слова. Эти идеи предполагают, что слова, особенно те, которые используются в ритуалах, имеют божественное происхождение и дарованы людям богами. В свою очередь обладатель божественного слова преподносит его в виде гимна или молитвы, принося в словесную жертву богам.

Следовательно, поэт берет на себя роль жреца, причудливо переплетающего речь и конструирующего с ее помощью вторичное мироустройство.

Ключевые слова: *культ речи, олицетворение, миротворчество, словесное жертвоприношение, жрец, гимн, молитва, поэма*

■ NVARD VARDANYAN

ABOUT THE MYTHICAL PERCEPTIONS OF THE CULT OF SPEECH AND THE POET AS A PRIEST

Summary

Since ancient times, humans have attributed immense power to speech, believing in its efficacy. According to these beliefs, spoken words do not dissipate into the void; they become audible to supernatural beings, thereby carrying both positive and negative consequences. This understanding has given rise to various magical incantations, which continue to find expression in magical folk genres such as prayers, oaths, curses, and blessings. Speech has been the subject of worship in different cultures and has been perceived in mythical contexts as a fundamental substance or even personified as a deity, representing a form of sacrifice. Ancient Eastern poetry, as well as folklore and literary texts, have preserved rich ideas regarding the veneration of the spoken word. These ideas suggest that words, particularly those used in rituals, have a divine origin and are bestowed upon individuals by the gods. In turn, the possessor of the divine word presents it as a hymn or prayer, offering it as a verbal sacrifice to the gods.

Consequently, the poet assumes a role akin to that of a priest, intricately weaving speech and constructing a secondary world structure with it.

Key words: *cult of speech, personification, peacemaking, verbal sacrifice, priest, hymn, prayer, poem*

■ **Նվարդ Խաչատուրի Վարդանյան** – բանագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայ գրականության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության տեսության և պատմության բաժնի ավագ գիտաշխատող: Մասնագիտական հետաքրքրություններն են հայ ժողովրդական բանահյուսությունը՝ ժողովրդական հեքիաթները, երգե-

ը, էպոսը: Հեղինակ է ավելի քան 35 գիտական հոդվածների և 2 մենագրության:

Нвард Хачатуровна Варданян – кандидат филологических наук, доцент кафедры армянской литературы Ереванского государственного университета, Армения. Старший научный сотрудник отдела фольклора Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: фольклор, народные сказки, народные песни, эпос. Автор более 35 научных работ и 2 монографий.

Nvard KhachaturVardanyan – Folklorist, Ph.D. in Philology, an associated professor at the Chair of Armenian Literature in Yerevan State University, she teaches courses in Folklore, Epic studies and The Armanian Literature. She alsow a Senior Researcher at the department of the Folklore of Institute of Archeology and Ethnography NAS RA. Research interests are Folklore, Folk Tales, Folk Songs, Epic. An author of more than 35 Scientific Works and 2 Monographs.
vardanyan.nvard@ysu.am